

Այստեղ, այս սիրոյ և լուսոյ տաճարի մէջ գուցէ ձեր  
միտքը լուսաւորուի և կեանքի մշուշը պարզէ, գուցէ ձեր  
ալեկոծ սիրտը իւր հանգիստը դանէ և ձեր հաւասարա-  
կըշութիւնը կորցրած կեանքը ներդաշնակ ընթանայ՝ և  
անխորհուրդ կարծուած այս կեանքի մէջ՝ յաւիտենական  
խորհուրդ դանէ:

Իսկ զու՝ Յիսուս մանուկ, որբերի և անպաշտպանների  
միակ տէրն ու խնամողը՝ Եկ վերջապէս մեր աշխարհը,  
ժողովիր և պահիր ցիր ու ցան հօտիդ թշուառ մնացորդ-  
ները, հրաշափառ յայտնութեանդ շնորհիւ զօրացուր նոցա  
և դարձուր Աստուծոյ որդիք, որ հոգով փառաբանեն քեզ  
երգելով «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղա-  
ղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Գէորգ Վարդապէտ

—

## Ն Ո Ր Տ Ա Ր Ի

Հայութիւնը ամենից աւելի նոր տարիներ է թերթել  
իր պատմական կեանքի ընթացքում, բայց այդ նոր տա-  
րիների հետ միասին նոր կեանք և նոր շրջան շատ քիչ է  
ունեցել: Որքան նոր տարիներ են եկել և անցել մեր աղջի  
վրայով, բայց մենք միշտ հին և միշտ նոյնն ենք մնացել  
ամեն կողմից:

Քրիստոնէական կրօնի տեսակէտից, նոր տարուաննշա-  
նակութիւնն է յառաջադիմել նրա կենսատու ճշմարտու-  
թիւնների և հրահանգների մէջ դէպի հոգեկան և բարոյա-  
կան կատարելութիւն, իսկ աղջային տեսակէտից, դիմել  
դէպի առաջ, դէպի զարգացում և դէպի ընկերական կատա-  
րելութիւն, խելքով, մտքով, խօսքով և դորձով: Այս երկու  
տեսակ նոր տարիներից, որն արդեօք պէտք է շնորհաւո-  
րենք մենք միմեանց, մինչ նոր տարիներ գալիս  
զնում են մեր աղջի վրայով, բայց մեր աղջը ոչ հոգեկան  
և բարոյական նորոգութիւն է ցոյց տալիս Քրիստոսի նոր

տարուայ հետ և ոչ էլ ազգային կենդանութիւն ազգային նոր տարուայ հետ:

Ահա մի տարի ևս ընկղմուեց յաւիտենական անցեալի մէջ՝ 1916 թուականը տուեց իր վերջին հրաժեշտի ողջոյնը և նոր տարին իր բոցափայլ և ճաճանչաւէտ ճակատը փայլեցրեց աշխարհի և մարդկութեան վրայ: Մարդիկ նայեցին նրա թարմ և նորափթթիթ ճակատին և ողջունեցին նրա մուտքը, բայց այս անգամ ոչ ցնծալից ձայներով: Նոյն ձեռվ ողջունեցին մարդիկ նաև հին տարին, որ այժմ մեր մէջ չէ այլ ես:

Մարդիկ ընդհանրապէս սպասում են նոր տարուն խնդալից և յուսալից, և որքան քաղցր և հրճուալից են երեսում նորածաղ տարուայ անդրանիկ ճառագայթները: Որքան դիւթիչ և հմայիչ աղղեցութիւն են ունենում նրա փայլուն և ըերկրալից անդրանիկ ոսկէփայլ վայրկեանները: Իսկ երբ մեկնում են նրա վերջին վայրկեանները, մահատիպ տխրութիւն է ովատում ամենքի վրայ, երբ մտածում են անցեալի զանցառութիւնների և իրենց զնասակար գործունէութեան վրայ: Եւ չէ որ անցած տարին իր մէջ բովանդակեց լիուլի աշխարհի վրայ կատարուած սարսուցուցիչ և դառնակսկիծ իրողութիւնները և ծանրաբեռնուած անլուր ոճիրներով և ծանրագոյն յանցանքներով մեկնեց մատուցանելու Ամենակալ Արարշին աշխարհիս տեղեկագիրը, թողնելով մարդկային ազգի ովատմութեան մէջ իր անջնջելի արձանագիրը:

Իսչ ձեռվ որ մեկնեց հին տարին, արդեօք նոյն ձեռվ պէտք է մեկնի նաև այս նոր տարին: Ճիշդ է, նոյնօրինակ մեղմիկ և անձայն քայլերով պէտք է մեկնեն նաև 1917 թուականի ոսկեղէն վայրկեանները, մինչև որ այս նոր տարուայ արշալոյսին յաջորդէ վերջալոյսը և ընկղմուի ըստ սովորականին յաւիտենական անցեալի մէջ: Բայց արդեօք քաղաքակալիրթ աշխարհին ամօթ և նախատինք ըերող նոյն ոճիրները և նոյն համայնակործան մեքենայագործութիւնները պէտք է շարունակուին, թէ խաղաղութեան կաղղուրիչ մի ձայն պէտք է հնչուի Կրուպի ահե-

ղագղորդ թնդանօթների ծխերով ամսլամած և ահ ու զողով պաշարուած արեգական շուրջը իւր առանցքի վերայ շրջանառութիւն կատարող երկրագնդի վերայ:

Այսպէս ահա անցնում է ժամանակը երբէք կանգ չառնելով կեանքի և աշխարհի շարունակական յեղաշրջումների և վրդովմունքների առաջ։ Մշտնջենական գետերը կարող են կանգ առնել, յաւէրժական լեռները կարող են մաշուել և փոշիանալ, տիեզերքի անբաւութեան մէջ աներեակայելի թուով և առատութեամբ արեները կարող են շիջանիլ, բայց ժամանակը երբէք և երբէք չի կարող դադար առնել։ Բայց միթէ տխուր մտածմունք է ազդելու մեղ ժամանակի այս մշտահոս ընթացքը, որ աւերում և քանդում է ամեն ինչ։ Ճիշդ է, բանաստեղծները ողբազին երգեր են հիւսում և անյոյս փիլիսոփայութիւնը ցրտին խորհրդածութիւններ է անում և յորդորում մեղ հպատակուել ճակատագրի անյեղի վճռին և յանձնուել ապագայի նկատմամբ յաւիտենական մթութեան։ Բայց քրիստոնեայ փիլիսոփան, այս ցրտին և տխուր մտածութիւններից աւելի վեր բարձրանալով, զիտէ, որ ժամանակի անվերջ հոսանքը թէն յեղաշրջում և քանդում է ամեն ինչ, բաց զիտէ նաև առաւել քան զայս։ Գիտէ նաև, որ ժամանակի և յաւիտենականութեան Տէրն ու Տնօրէնը այս մշտնջենական ընթացքի մէջ ի կատար է ածում իր յաւիտենական խորհուրդները, ժամանակի աւերումներից և յեղաշրջումներից շարունակար կտուցանելով և ի վեր բարձրացնելով աշխարհի և մարդկութեան այն փառաշուշ շինուածքը, որի փառքը և մեծութիւնը մեր հունաւոր մտքերից խիստ բարձր է։

Մենք ընդհանրապէս սովոր ենք ժամանակի աւերումները նկատել միայն, բայց կարեոր է բարձրագոյն և հոգեկան տեսութեամբ նկատել նաև այն մեծ և փառալից գործը, որ Աստուած թէ աշխարհի վրայ և թէ ամբողջ տիեզերքի մէջ յառաջ է վարում ժամանակի ընթացքում։ Յաւիտենական և անհուն կատարելութեան մի ծրագիր է ի կատար ածւում այս մեր աշխարհի վերայ, ինչպէս նաև

անբաւութեան մէջ սփոռուած անհաշուելի աշխարհների և արևների վրայ և ամեն մի տարին մօտեցնում է մեղ մեր աշխարհի և ընդհանրապէս տիեզերական այն փառաւոր կատարելութեան, որ պարունակուում է Յաւիտենական էակի ծրագրի մէջ:

Աշխարհի և տիեզերքի ճակատագիրը աւերում և քայքայում չէ, կան աւերումներ և քայքայումներ, բայց այդ աւերումներից և քայքայումներից հետզհետէ ծագելու են նորանոր փառքեր և նորանոր բարձրութիւններ և քրիստոնեայ փիլիսոփան վստահ է տեսնելու այնպիսի բարձր կատարելութիւններ, որոնց այժմ երեակայել անգամ չենք կարող: Այդ վերին և փառալից բարձրութեանն ենք մօտենում քայլ առ քայլ և սլացող տարիները աստիճան առ աստիճան բարձրացնում են մեղ դէպի այդ կատարելութիւնը: Թողութիւն մեկնող տարին, որքան էլ յղփացած լինի աշխարհիս վերայ կատարուած սրտասարսուռ իրողութիւններով, յուսահատութիւն չաղղէ մեղ, դրանք բոլոր քայլեր են դէպի կատարելութիւն: Բոլոր անցած տարիներն ու դարերը այսպէս են յառաջ մղել ամեն ինչ դէպի կատարելութիւն և Աստուած տարիների և դարերի հոլովմամբ մեր ձեռքից բոնած առաջնորդում է մեղ բարձրութիւնից բարձրութիւն շնորհիւ այն իմացականութեան զօրութեան, որ ինքն է դրել մարդկութեան մէջ: Ապագայ անհաշուելի տարիներն ու դարերը անցեալների նման մի և նոյն դերն ու գործն ունին կատարելու, որոնց մի փոքրիկ մասնիկն է կազմում նաև այս ներկայ նոր տարին:

Քրիստոս մարդկութիւնը մօտեցնելով Աստուծուն, դրեց մարդկային ազգի բարձրագոյն վիճակի սկզբնաւորութիւնը, այն է՝ բարձրագոյն և հոգեկան մարդկութեան թագաւորութիւն, և այդ թագաւորութիւնը հետզհետէ պէտք անի, զօրանայ և զարդանայ երկրի վրայ և ինչպէս ինքն ասաց, պէտք է նմանի մանանեխի հատիկին, որը թէ և շատ փոքր է սկզբից, բայց շարունակական աճմամբ բազմածիւղ և հսկայական ծառ դառնալով, լինում է ապաստանարան թռչունների: Այսպէս պէտք է ծաւալի ժամանակի

ընթացքում գերազոյն մարդկութեան գերազոյն կատարելութեան թագաւորութիւնը և պէտք է կատարուի մարդարէի կանխասացութիւնը,—«Ո՞չ մեղիցեն և ոչ կարացեն հարկանել զոք ի լեռին սրբութեան իմոյ, զի լցցի երկիր ամենայն գիտութեամբ Տեառն»:

Ո՞վ չի ցանկանալ մտնել այնպիսի բարձր վիճակի մէջ, որին ժամանակը ոչ թէ չի կարող միայն մի որ և է վսաս հասցնել, այլ ընդ միշտ պէտք է յառաջացնէ և բարձրացնէ։ Ո՞վ չի ցանկանալ մտնել այդ անվերջ յառաջադիմութեան հոսանքի մէջ—մտնել այնպիսի մի ուղղութեան մէջ, որի մէջ Աստուած օգնական պէտք է լինի իրեն, որի կարեւորութիւնը սաղմուերգու Դաւիթը Քրիստոսից շատ դարեր առաջ զգալով բացականչել է Շերանի ազգի, որոյ Տէր Աստուած Յակովը օգնական է նմա։ Այս ուղղութիւնն է դէպի վեր, դէպի կատարելութիւն ելնելու ուղղութիւն։ Այս ուղղութիւնն է մարդկային ազգի այն բարոյական և հոգեկան յարազուարձ վիճակը, դէպի որը Աստուած ուղում է առաջնորդել մեզ և որի համար Քրիստոս աշխարհ եկաւ, — «Ես եկի զի զկեանս ունիցին և առաւել ևս ունիցին»։

Մտածենք ուրեմն, թէ որքան փառահեղ գործի են ձեռնարկում նրանք, որոնք իրենց բոլոր ուժով, ուղիղ և օգտակար սկզբունքներով և անկեղծաբար աշխատում են թէ իրենց ազգի և թէ համայն մարդկութեան ճշմարիտ յառաջադիմութեան համար. բայց աւաղ, որքան հաղուազիւտ են այդպիսիները և դժբախտաբար որքան առատ են վսասակարները, որոնք իրենց ձեռքն են առել անկոշաբար հայրենիքի և ազգի ապաղայ բաղդը։

Բայց թող նոր տարին քաջալերէ և ամրապնդէ սակաւ, բայց լրջամիտ, շրջահայեց, սրտացաւ և հեռատես ու օգտակար գործիչներին նորագոյն յոյսերով, հաւատով և եռանդով խելական յառաջադիմութեան համար իրենց ունեցած աշխատութիւնների մէջ, և թող ամեն մի նոր տարի նոր մղում տայ իրենց բարձրագոյն ուղիղ սկզբունքներին։ Ապագայ սերունդը պէտք է դրուատէ այդ մղման մասնա-

կից եղողներին, որոնք իրենց անխարդախ և հեռատեսուառանց անձնական շահախնդրութեան և փառամոլութեան աշխատելու են թէ իրենց ազգի և թէ համայն մարդկութեան մէջ առաւել լոյս սփռելու, առաւել բարութիւն և առաւել կատարելութիւն բերելու:

Այս նոր տարուան առթիւ, թէ աշխարհիկ և թէ եկեղեցական գործիչների համար իմ ջերմազին բարեմաղթութիւնն է, որ մտնեն նրանք ճշմարիտ բարձրութեան և ճշմարիտ յառաջապիմութեան շաւղի մէջ և կատարեն իրենց պարտքը համայն մարդկութիւնը այդ նոյն շաւղի մէջ յառաջ մղելու: Իսկ յատկապէս բազմաչարչար հայ ազգի համար չունիմ առաւել քան զայս բարձրագոյն բարեմաղթութիւն առ Բարձրեալն Աստուած, որ այս նոր տարուան հետ մի այցելութիւն անի թշուառներից թշուառագոյն հայ ազգին կենդանացնելու նրան իր ազգային վիճակով և իր բոլոր դրութիւններով: Այս նոր տարուան նորածագ արշալոյսի հետ, թող ծագէ նաև հայոց աշխարհի և նրա վերայ պատմական իրաւունքով ապրող հայ ժողովրդի հորիզոնի վրայ, ազգային, բարոյական, մտաւոր, հոգեկան, ընկերական, ընտանեկան և տնտեսական լաւագոյն կեանքի արշալոյսը: Եւ թող հայ ազգն էլ ընդունակ լինի իր այսքան փորձանալից փորձառութեամբ ըմբռնելու իր բարիքը, ճանաշելու իր անկեղծ, անշահախնդիր և սրտացաւ գործիչները և ունկն դնելով նրանց հրահանգներին և յորդորներին; Նրանց ցոյց տուած ճանապարհով ընթանալու և մտնելու այն ճշմարիտ բարձրութեան և այն ճշմարիտ յառաջապիմութեան շաւղի մէջ, դէմի որը առաջնորդում է Աստուած ամեն ինչ ժամանակի հոսանքի հետ:

Առօս Եպիսկոպոս

